

WS NPKS

WS NPK

18 - 18 - 18 + TE



Van Iperen WS NPK 18 - 18 - 18 + TE-ն բալանսավորված, ջրում ամբողջությամբ լուծվող և EDTA խելատացված միկրոտարրերով համակցված կոմպլեքս պարարտանյութ է: Այս կոմպլեքսն ունի կիրառման առանձնահատկություններ. խորհուրդ է տրվում օգտագործել տարբեր ֆենոլոգիական փուլերում: Ազոտի, ֆոսֆատի և կալիումի բարձր հավասարաչափ պարունակությունը բարելավում է բջիջների բաժանումը, աճը և բջջային ճնշումը: Մագնեզիումի և միկրոտարրերի առկայությունը խթանում է բույսի ընդհանուր նյութափոխանակությունը:



Բաղադրություն (%w/w)

Ընդհանուր ազոտ	18%
Նիտրատային ազոտ	5.3%
Ամոնիակային ազոտ	7.2%
Ուտեիկ ազոտ	5.5%
Ֆոսֆորի հնգօքսիդ	18%
Կալիումի օքսիդ	18%
Ծծումբի եռօքսիդ	11%
Բոր	0.008%
Պղինձ	0.002%
Երկաթ	0.02%
Մանգան	0.009%
Մոլիբդեն	0.0009%
Ցինկ	0.002%

- Նպաստում է արմատների և ծիլերի աճին, վեգետատիվ աճին, բարելավում է բողբոջների և պտուղների աճն ու որակը
- Միկրոտարրերը 100%-ով խելատացված են և հասանելի են բույսի համար
- Ամբողջությամբ լուծելի է ջրում, հեշտ է կիրառության համար
- Կարելի է կիրառել և՛ բաց գրունտում, և՛ ջերմատներում՝ ոռոգմամբ և տերևային սնուցմամբ

Առանձնահատկություններ

- Արագ լուծելի
- Նատրիումի և քլորի ցածր պարունակություն

Համատեղելիություն

WS NPK 18 - 18 - 18 + TE կոմպլեքսը համատեղելի է այլ պարարտանյութերի հետ՝ բացառությամբ կալցիում պարունակող պարարտանյութերի: Այդ պատճառով, առանձին բաքի անհրաժեշտություն է առաջանում, կամ այս պարարտանյութերը պետք է կիրառվեն տարբեր ժամանակահատվածներում: Բաքի լուծույթի pH-ը պետք է լինի 4-ից բարձր:



Փաթեթավորում



ԱԳՐՈՏԵԽ ՍՊԸ | Հեռ. +374 91 20 62 20 | info@agrotech.am | www.agrotech.am

Հասցե՝ Երևան, 0014, Ադոնցի 2/1, մուտք 2

Գիտե՞ք արդյոք

Van Iperen-ն առաջարկում է ջրալույծ NPK պարարտանյութերի լայն ցանկ ազոտի, ֆոսֆորի և կալիումի ցանկացած հարաբերակցությամբ՝ կախված պահանջարկից: Van Iperen-ի NPK պարարտանյութերի ցանկը ներառում է բարձրորակ ստանդարտ կոմպլեքսներ, կոմպլեքսներ կոշտ ջրի և անձրևաջրի համար, և հատուկ կոմպլեքսներ Iperen IPE տեխնոլոգիայով (ֆոսֆատի ավելի բարձր արդյունավետությամբ տեխնոլոգիա): Van Iperen-ի NPK պարարտանյութերը «Իպերեն մասնագիտացված պարարտանյութերի» մի մասն են կազմում:

“ԱԳՐՈՏԵԽ” ընկերությունը ջերմատներին, ֆերմերներին և բուսաբուծական արտադրությունում ներգրավված այլ անձանց մատակարարում է բույսերի մշակության համար բարձրորակ ապրանքներ, ինչպես նաև այդ բնագավառում տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն:

www.agrotech.am

Van Iperen International հոլանդական ընկերությունն իր գործունեությունը ծավալում է ողջ աշխարհում՝ արտադրելով և մատակարարելով ամենատարբեր մասնագիտացված պարարտանյութեր:

www.vaniperen.com

Ծախսի նորմա | Ոռոգում

Մշակաբույս	Գիրառման ժամանակաշրջան	Նվազագույն կգ/ հա/ սեզոն	Առավելագույն կգ/ հա/ սեզոն
Սրգատու ծառեր 	- Ծաղկման փուլի ավարտին - Մինչ պտղի հասունանալը	100	200
Բանան 	Վեգետատիվ աճի սկզբնական փուլում	150	250
Ցիտրուս 	Վեգետատիվ աճի սկզբնական փուլում	150	300
Կարտոֆիլ 	- Պարարտացման ողջ ընթացքում - Մինչ պալարի ձևավորումը	100	200
Պտղատու բանջարեղեն 	- Վեգետատիվ աճի սկզբնական փուլում - Մինչ պտղի ձևավորումը	150	300

Ծախսի նորմա | Տերևային սնուցում

Մշակաբույս	Գիրառման առանձնահատկություններ	Նվազագույն կգ/ հա/ կիրառում	Առավելագույն կգ/ հա/ կիրառում	Կոնցենտրացիա % (w/v)
Ցանրատարածային մշակաբույսեր 	3 անգամ՝ - Վեգետատիվ աճի շրջանում 10 - 14 օր ընդմիջում	3	6	0.5 - 0.8
Կորիզավոր մրգեր 	2 անգամ՝ - Վեգետատիվ աճի շրջանում - Մրգի հասունանալու շրջանում	3	6	0.3 - 0.5
Բանան 	2 - 4 անգամ՝ - Վեգետատիվ աճի սկզբնական փուլում - Մինչ ծաղկման փուլը	5	10	0.3 - 0.5
Ցիտրուս 	2 անգամ՝ - Վեգետատիվ աճի փուլում - Բերքահավաքից հետո	5	10	0.5 - 0.8
Ձիթապտուղ 	3 անգամ՝ - Գարնանը - Վեգետատիվ աճի փուլում - Պտղի ձևավորվելու փուլում	5	10	0.5 - 1.0

Տերևային սնուցման դեպքում՝ բույսերի պաշտպանության այլ ապրանքների հետ որպես խառնուրդ կիրառելիս անհրաժեշտ է համատեղելիության թեստ անցկացնել խառնուրդի պատրաստմանը զուգընթաց:

Նշված քանակները, ծախսի նորմաները և կիրառման փուլերը ներկայացված են որպես ցուցում: Հստակ ծախսի նորմաները, չափաքանակները և կիրառման փուլերը կախված են տեղի պայմաններից, այլ պարարտանյութերի կիրառումից, և կարող են ներկայացվել միայն ճշգրիտ ուսումնասիրությունից հետո: